[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԵՍԱՊԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ]

Հետաքրքիր զուգադիպություն: Ճիշտ այդպիսի մի տեսություն էլ ստեղծվել է Անիի Մայր տաճարն ամբողջությամբ, դեռևս 13-րդ դարասկզբում նոր երեսապատումով ծածկված լինելու վերաբերյալ Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքի բազմամյա պեղումների ղեկավար Ն. Յա. Մառի կողմից:

Եվ ահա, հավաստի լինելու բավական հեռու, ճարտարապետական-շինարարական ստույգ քննության և հիմնավորման կարոտ այդ տեսությունից պինդ բռնած, այսօր էլ Գ. Չուբինաշվիլին իր աշխատություններում բազմիցս կրկնում ու առաջին պլան է մղում այդ տեսությունը, որի համաձայն մեր օրերում դեռևս կանգուն Անիի Մայր տաճարը իր այդ վիճակով ոչ թե 10-րդ դարի վերջին տասնամյակի շինություն է, ինչպես այդ հայտնի է բուն տաճարի վրա եղած արձանագրությունից և կառուցման ժամանակակից մատենագիր Ասողիկի վկայությունից, այլ արգասիք է «ոչ վաղ, քան 13-րդ դարը» ժամանակամիջոցի (Н. Я. Марр – Ани, Ереван, 1939, էջ 222):

Ն. Յա. Մառի կարծիքով Անիի մայր տաճարի արտաքինը սկզբնապես եղել է շատ պարզ և հասարակ, որ իբր այդ է հաստատում 8-րդ դարի մի այլ տաճարում 1911 թվականի պեղումներով հայտաբերված <u>նրան վերագրվող</u> մոդելը:

Ներկա տաճարը 12-րդ դարավերջի և 13-րդ դարասկզբի գործ լինելը հաստատելու նպատակով Ն. Մառը նշում է արտաքին երեսպատման քարի առավել կատարյալ տաշվածությունը, քարի որակը և գույնը (կարմիր), ցեմենտի հատկությունը՝ մեծ ամրություն, արտաքին ձևավորման բարակ և ձգված կիսասյուների «դեկորատիվ հավելումներ» հանդիսանալը, ինչպես և այդ բարակ սյուների «զույգ լինելու կանոնին» չհամապատասխանելը:

Ն. Մառը ուշադրություն է դարձնում, որ այդ հուշարձանին վերագրվող մոդելի վրա գոյությունը պահպանած տաճարի երեսապատման քարի գունային խաղի, և հարուստ զարդաքանդակների ակնարկն անգամ չկա:

Տեսության հեղինակը մայր տաճարի երեսպատման քարի վառ գույները հակադրում է, ինչպես ինքն է որակում՝ Գագկաշենի «միապաղաղ մթագույնի» հետ, մանավանդ որ, շարունակում է Ն. Մառը, այդպիսիք կառուցվել են նույն ժամանակներում, նույն ընտանիքի «երկու կեսերի»՝ թագուհի Կատրամիդեյի և թագավոր Գագիկի կողմից:

Սրանով նա հանգում է այն եզրակացության, որ Մայր տաճարն էլ սկզբից պիտի ունեցած լինի Գագկաշենի գույնը, և որ ներկա տաճարի վառ գույներով օժտված պատը հետագայի՝ 13-րդ դարի գործ է: Ն. Մառը Մայր տաճարը ավելի մոտ է համարում Գրիգորի քաղկեդոնական (Տիգրան Հոնենցի) եկեղեցուն (1215 թ.), քան Գագկաշենի սկիզբը՝ 1001 թ.: Այնուհետև, Մայր տաճարի արձանագրության մեջ վրացական թվագրության առկայությունը Անիի հայ թագավորների ժամանակներում Ն. Մառը համարում է անընդունելի: Ն. Յա. Մառի վերը հիշված գրքի Մայր տաճարին նվիրված 10-րդ գլխի հենց սկզբում (էջ 218) հեղինակը գրում է «Памятник внутри так же великолепен, как снаружи, быть может, более»: Այժմ դժվար է պատկերացնել, թե գիտնականը ինչպե՞ս է «ներքին հոյակապություն» ունեցող այդ տաճարին վերագրում ներքինի հետ հակասության մեջ գտնվող սովորական, հասարակ արտաքին, այն էլ 10-րդ դարավերջի ճարտարապետական կոթողի, հայկական շքեղ մայրաքաղաքում կանգնեցվող Մայր տաճարի վերաբերյալ:

Ճիշտ չէ ընդհանրացնել և ասել, որ իբր 10-րդ դարից առաջ և, ընդհանրապես հայկական բոլոր հուշարձանները ստեղծված են մթնագույն քարից, որ իբր այդ մեր ազգային արվեստի յուրահատկություններից մեկն է, մի թեզ, որը շատ են կրկնում արդի մեր վրաց արվեստակիցներից ոմանք: Նույն Անիում 10-րդ դարի շատ կառուցումներ, այդ թվում նաև պարսպապատեր, երեսպատված են Մայր տաճարի գույնն ունեցող քարով:

Ապա ցեմենտի, ավելի ճիշտ՝ շաղախի մեծ ամրությունը, քարի տաշվածքի և պատի շարվածքի կատարյալ լինելը, որ նշում է Ն. Մառը, ինչպես հայտնի է, հատուկ է մեր ոչ միայն 10-րդ, այլև 7-րդ դարի հուշարձաններին: Կան 10-րդ և ավելի ուշ

կառուցված հուշարձաններ, որոնք վաղուց կործանվել են, կան և 7-րդ դարի հուշարձաններ, որ մեր օրերում էլ շարունակում են իրենց կանգուն գոյությունը: Այդ էլ հենց նշան է նրանց շաղախի ամրության:

Հավանականությունից հեռու է, որ 10-րդ դարավերջի շինությունը այդքան վաղ՝ 12-րդ դարավերջում այնպիսի վիճակի մեջ ընկներ, որ անհրաժեշտ լիներ այն ամբողջովին երեսապատել: Հապա ինչպե՞ս է, որ այդ նույն հուշարձանի, թեկուզ և 12-րդ դարի երեսապատումը, որ բուն պատի հետ պիտի շատ էլ չմերվեր, մինչև այսօր, մոտ 800 տարի անց պահպանվում է ու չի թափվում:

Մայր տաճարի պահպանված արձանագրությունից հատնի է, որ 1200-ական թվականներին նորոգվել են տաճարի աստիճանները: Ն. Մառն ասում է, որ հենց այդ ժամանակներում էլ պիտի կերպարանափոխված լինի ողջ շինությունը: Տրամաբանական՞ն է, արդյոք մտածել, որ լոկ աստիճանների նորոգության փաստն անդրադառնա արձանագրության մեջ, մինչ եկեղեցու նշանակալից վերաշինության ակնարկն անգամ չհիշատակվի արձանագրությամբ, կամ որևէ կերպ:

Շատ կարևոր է, և չպետք մոռանալ նաև, որ Անիի Մայր տաճարի կառուցողը միջնադարի հանճարեղ ճարտարապետ Տրդատն է, և որ Մայր տաճարն էլ նախորդող շրջանի մեր կոթողների լոկ կրկնությունը չէ, նրանց զարգացման նոր էտապն է, նոր է, այն հենց դրանով էլ նշանավոր է:

Այս նույն առումով, սյուների «զույգ լինելու կանոնն» էլ արդարացի պահանջ չէ, քանի որ Մայր տաճարից առաջ էլ մեր հուշարձաններում երբեմն հանդիպում ենք նրանց «կենտ» գործածությանը: Հենց Մայր տաճարի ներսում էլ գլխավոր մույթերի վրա այդպիսիք «կենտ» են: Միթե՞ Զվարթնոցի մեծ թմբկապատի ներսի բարակ որմնասյուները «կենտ» չեն և ինչո՞վ են տարբերվում Մայր տաճարի «կենտ» որմնասյուներից: Տրդատն էլ այդ ձևը տաճարների ներսից բերել է դուրս, ի՞նչ կա զարմանալու:

Եթե բարակ «կենտ» որմնասյուները հատուկ են 13-րդ դարին, հապա ինչու՞ 13-րդ դարի հուշարձան հանդիսացող Հոնենցի, ինչպես և մի շարք այլ եկեղեցիներում այդ

դեկորատիվ որմնասյուները «կենտ» չեն, դարձյալ «զույգ» են: Եվ այդ ինչպե՞ս է, որ տաճարը համարվում է 11-րդ դարի սկզբի, և ոչ 13-րդ դարի գործ:

Ն. Յա. Մառին լավ հայտնի է, որ Անիի Գագիկ թագավորը (989-1020 թթ.) ուներ «թագավոր հայոց և վրաց» տիտղոսը. ինչու՞ խորթ է համարում, որ հայերեն արձանագրության մեջ տեղ է գտել նաև վրացական թվագրություն, չէ՞ որ այդ արվում էր կառուցման թվականը հետնորդների կողմից առավել ճշտիվ կարդալու համար: Քի՞չ տաճարներ կան, որոնց վրացերեն արձանագրություններում նշված է նաև հայկական թվագրություն (Իշխանը Տայքում և այլն):

Գ. Չուբինաշվիլին ևս նկատել է, որ այս հարցերում Ն. Մառը չափազանցություններ է թույլ տալիս, բայց այդ չի խանգարում, որ նա ամբողջությամբ ընդունի նույն Ն. Մառի տեսությունը և ջանա ապացուցել, որ գոթական ոճի ստեղծման ակունք է հանդիսացել ոչ թե Անիի Մայր տաճարը, այլ Քութայիսի Բագրատի տաճարը:

Արտաքին բարակ դեկորատիվ որմնասյուների գործադրությունը Մայր տաճարի վրա տանելով 13-րդ դար, փաստորեն այդ մոտիվի առաջին ստեղծող Տրդատի փոխարեն դառնում է մի ուրիշը: Այսպիսով, օրը ցերեկով միջնադարի ճարտարապետ Տրդատը մաքուր կողոպտվում է:

Գ. Չուբինաշվիլին 13-րդ դարի հայ ճարտարապետության կոթողները համարում է քաղկեդոնականության ազդեցության արգասիք, դրա տակ ակնարկելով վրաց ճարտարապետության ազդեցությունը: Նա՝ Գ. Չուբինաշվիլին Ներսես Գ Շինողին համարելով թունդ քաղկեդոնական, նրա կառուցած Իշխան տաճարը, ըստ երևույթին նաև Զվարթնոցը, համարում է կերտված քաղկեդոնական ճարտարապետության ազդեցությամբ:

Քաղկեդոնականություն ասելով, գիտնականը իզուր է անվերապահորեն հասկանում վրացական. չէ՞ որ այդ նախ և առաջ հունական կրոնն է, որին հարել են ինչպես վրացիները, այնպես էլ, սակայն մասնակիորեն, հայերը: Արդ, եթե Անիի Մայր տաճարի և Զվարթնոցի ճարտարապետությունը անվանվում է քաղկեդոնական, ապա հետևում է, որ այդ ևս ստեղծել են հայերը, իրենք՝ Ներսեսը և Տրդատը: Անժխտելի է, որ քաղ-

կեղոնակնները Զվարթնոցից առաջ չեն ունեցել այդ ոճով կերտված տաճարներ, որոնց ազդեցությամբ էլ կառուցվեր Զվարթնոցը կամ Անին:

Անիի Մայր տաճարի արձանագրության ստուգության նկատմամբ թերահավատությունը (Կոնդակով, Մառ, Չուբինաշվիլի), նրա արտաքին պատերին ճարտարապետորեն չհիմնավորված ամբողջական նոր երեսպատում վերագրելը, դրանով իսկ 10-րդ դարավերջի հուշարձանը 13-րդ դար տեղափոխելը կանխակալ մտածողության արգասիք է, զուրկ բավարար հիմքից:

Ահա, թե եկեղեցիների ամբողջական երեսապատման տեսությունները, նույնիսկ շատ տեղյակ գիտնականների մոտ, ինչպիսի սերմից են ծլարձակվում: